ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՑՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

05-ը դեկտեմբերի 2022թ. **ք. Երևան**

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ նախագահությամբ դատավոր Ս. Սահակյանի, ուսումնասիրելով <<Շինաշխարհ>> ՍՊԸ-ի հայցադիմումը,

ՊԱՐԶԵՑ

<<Շինաշխարհ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչը 22.11.2022թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Աբովյանի համայնքապետարանի՝ <<ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-22-25-1>> ծածկագրով շինարարական աշխատանքների կատարման գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 28.11.2022թ. հայցադիմումը վերադարձվել է:

Հայցվորը հայցադիմումը վերադարձնելու վերաբերյալ որոշումը ստացել է 29.11.2022թ. և 30.11.2022թ. հայցադիմումը կրկին ներկայացրել է դատարան /Հիմք՝ հայցադիմումի վրա առկա դրոշմակնիք/:

Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության րենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցադիմումի թերությունները վերացնելու համար առաջին ատյանի դատարանը տրամադրում է եռօրյա ժամկետ՝ սկսած հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումն ստանալու պահից, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ և 10-12-րդ կետերով սահմանված դեպքերի: Եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Տվյալ դեպքում նկատի ունենալով, որ հայցվորը որոշմամբ մատնանշված հայցադիմումում առկա թերությունները վերացրել և այն դատարան կրկին ներկայացրել է եռօրյա ժամկետում՝ դատարանը գտնում է, որ հայցադիմումը պետք է դատարան ներկայացված համարել այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 22.11.2022թ.:

Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ գործը դատական նիստում քննելու անհրաժեշտությունը բացակայում է, ուստի գործը պետք է քննել գրավոր ընթացակարգով:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.6-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑ

<<Շինաշխարհ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Աբովյանի համայնքապետարանի՝ <<ԱԲՀ-ԳՀԱԵՁԲ-22-25-1>> ծածկագրով շինարարական աշխատանքների կատարման գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ. ընդունված համարելով այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 22.11.2022թ.:

Գործը քննել գրավոր ընթացակարգով:

Եզրափակիչ դատական ակտ կայացնել և հրապարակել 2023 թվականի հունվարի 13-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ